ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 04.06.2021թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ՍՑ-ՆԳ-2021/131

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի,

Մասնակցությամբ՝ «Գլոբալ-Շին» ՍՊԸ-ի լիազորված ներկայացուցիչ Ա. Պարանյանի (լիազորագիր՝ տրված 31.05.2021թ.),

ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 24.05.2021թ. թիվ 26/26-1/8196-2021 գրությամբ «Գլոբալ-Շին» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը ՀՀ պաշտպանության նախարարության (հետայսու նաև՝ Պատվիրատու) 17.05.2021թ. թիվ ՊՆ/02/2627-2021 գրության հիման վրա 24.05.2021թ. թիվ 26/26-1/8196-2021 գրությամբ նախաձեռնել է «Գլոբալ-Շին» ՍՊԸ-ին (հետայսու նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. «Գլոբալ-Շին» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.

«Գլոբալ-Շին» ՍՊԸ-ն Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին 01.06.2021թ. ուղղված գրավոր դիրքորոշմամբ հայտնել է հետևյալը.

««ԳԼՈԲԱԼ-ՇԻՆ» ՍՊԸ-ն մասնակցության հայտ է ներկայացրել ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար հայտարարված «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-10/16» ծածկագրով ընթացակարգին:

Ընթացակարգի հրավերի 10.2 կետի համաձայն՝ որակավորման ապահովման չափը հավասար է ընտրված մասնակցի գնային առաջարկի 15 տոկոսին:

Ընթացակարգի հրավերի Հավելված 1-ի 1-ին կետի համաձայն՝ մասնակիցը հայտարարում և հավաստում է, որ.

1) բավարարում է ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-10/16 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին և պարտավորվում ընտրված մասնակից ճանաչվելու դեպքում, հրավերով սահմանված կարգով և ժամկետում, ներկայացնել որակավորման ապահովում:

«ԳԼՈԲԱԼ-ՇԻՆ» ՍՊԸ-ն ներկայացված Հավելված 1-ով հայտնել և հավաստել է, որ պարտավորվում է ընտրված մասնակից ճանաչվելու դեպքում, հրավերով սահմանված կարգով և ժամկետում, ներկայացնել գնային առաջարկի չափով որակավորման ապահովում:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 07.05.2021թ. տեղի ունեցած նիստի թիվ 4 արձանագրության 2.3 կետով արձանագրվել է հետևյալ.

«ԳԼՈԲԱԼ-ՇԻՆ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված դիմում-հայտարարության /Հավելված 1/ կետի համաձայն՝ մասնակիցը <<... պարտավորվում է ընտրված մասնակից ճանաչվելու դեպքում, հրավերով սահմանված կարգով և ժամկետում, ներկայացնել գնային առաջարկի չափով որակավորման ապահովում>>, ինչը չի համապատասխանում հրավերի պահանջներին:

Արդյունքում գնահատող հանձնաժողովի կողմից «ԳԼՈԲԱԼ-ՇԻՆ» ՍՊԸ-ին տրամադրվել է 1 աշխատանքային օր ժամկետ անհամապատասխանությունը շտկելու համար:

Նույն արձանագրության համաձայն՝ հաշվի առնելով, որ «ԳԼՈԲԱԼ-ՇԻՆ» ՍՊԸ-ի կողմից չի շտկվել արձանագրված անհամապատասխանությունը, ուստի հիմք

ընդունելով Կարգի 42-րդ կետի պահանջները՝ գնահատող հանձնաժողովը որոշեց «ԳԼՈԲԱԼ-ՇԻՆ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը գնահատել անբավարար և մերժել:

Գործի իրավական հիմքերը և հիմնավորումները

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետը սահմանում է, որ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա դադարեցմանը:

«ԳԼՈԲԱԼ-ՇԻՆ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված թիվ ՍՑ-ՆԳ-2021/131 ընթացակարգի հիմքերը քննելիս՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ուշադրությունն ենք դարձնում հետևյալ կարևոր հանգամանքների վրա.

1. ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշման (այսուհետ նաև՝ Կարգ) 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ ներառյալ այն դեպքերը, երբ հայտում ներառված Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը: Մասնակցին ուղարկվող ծանուցման մեջ մանրամասն նկարագրվում են հայտնաբերված անհամապատասխանությունները:

Ինչպես արդեն հայտնել ենք, «ԳԼՈԲԱԼ-ՇԻՆ» ՍՊԸ-ն մասնակցության հայտ է ներկայացրել ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-10/16» ծածկագրով ընթացակարգին:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 07.05.2021թ. տեղի ունեցած նիստի թիվ 4 արձանագրության 2.3 կետով արձանագրվել է, որ «ԳԼՈԲԱԼ-ՇԻՆ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված դիմում- հայտարարության /Հավելված 1/ կետի համաձայն՝ մասնակիցը «... պարտավորվում է ընտրված մասնակից ճանաչվելու դեպքում, հրավերով սահմանված կարգով և ժամկետում, ներկայացնել գնային առաջարկի չափով որակավորման ապահովում», ինչը չի համապատասխանում հրավերի պահանջներին:

Արդյունքում գնահատող հանձնաժողովի կողմից «ԳԼՈԲԱԼ-ՇԻՆ» Ս-Ը-ին տրամադրվել է 1 աշխատանքային օր ժամկետ՝ անհամապատասխանությունը շտկելու համար:

Նույն արձանագրության համաձայն՝ հաշվի առնելով, որ «ԳԼՈԲԱԼ-ՇԻՆ- ՍՊԸ-ի կողմից չի շտկվել արձանագրված անհամապատասխանությունը, ուստի հիմք Կարգի 42-րդ կետի պահանջները՝ գնահատող հանձնաժողովը որոշել է «ԳԼՈԲԱԼ-ՇԻՆ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը գնահատել անբավարար և մերժել:

Բողոքներ քննող անձին խնդրում են նկատի ունենալ, որ գնահատող հանձնաժողովը չի պահպանել Կարգի 41-րդ կետի պահանջները, որը սահմանում է, որ անհամապատասխանություն արձանագրելու դեպքում հանձնաժողովի նիստի արձանագրության մեջ /նաև մասնակցի ուղարկվող ծանուցման մեջ/ մանրամասն նկարագրվում են հայտնաբերված անհամապատասխանությունները: Մինչդեռ ուսումնասիրելով Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 07.05.2021թ. տեղի ունեցած նիստի թիվ 4 արձանագրությունը, ինչպես նաև ուղարկված ծանուցումը, պարզ է դառնում, որ գնահատող հանձնաժողովը ընդհանրապես չի նկարագրել արձանագրված անհամապատասխանությունը՝ ավելի կոնկրետ՝ թե ինչ է շտկելու մասնակիցը և ինչպես, այլ ընդամենը վերացական նշել է, որ «ԳԼՈԲԱԼ-ՇԻՆ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված դիմում-հայտարարության Հավելված 1/ կետի համաձայն՝ մասնակիցը պարտավորվում է ընտրված մասնակից ճանաչվելու դեպքում, հրա-երով սահմանված կարգով և ժամկետում, ներկայացնել գնային առաջարկի չափով որակավորման ապահովում», ինչը չի համապատասխանում հրավերի պահանջներին:

Մասնավորապես, թե Ընթացակարգի հանձնաժողովի 07.05.2021թ. տեղի ունեցած նիստի թիվ 4 արձանագրության, և թե ծանուցման մեջ վկայակոչվել է Ընթացակարգի հրավերի 10.2 կետի և Հավելված 1-ի 1-ին կետի պահանջները, որտեղ մի տեղում գրված է, որ որակավորման ապահովումը հավասար է ընտրված մասնակցի գնային առաջարկի

15 տոկոսին, իսկ մյուս տեղում, որ մասնակիցը ներկայացնում է որակավորման ապահովում, ինչից պարզ չի դառնում, թե ի վերջո, «ԳԼՈԲԱԼ-ՇԻՆ» ՍՊԸ-ն Հավելված 1-ի շտկված տարբերակում ինչ պիտի գրեր՝ գնային առաջարկի 15 տոկոսին հավասար որակավորման ապահովում, թե որակավորման ապահովում:

Այսինքն գնահատող հանձնաժողովի կողմից ուղղակի նշվել է, որ դիմում-հայտարարության /Հավելված 1/ կետի համաձայն՝ մասնակիցը «... պարտավորվում է ընտրված մասնակից ճանաչվելու դեպքում, հրավերով սահմանված կարգով և ժամկետում, ներկայացնել գնային առաջարկի չափով որակավորման ապահովում>>, ինչը չի համապատասխանում հրավերի պահանջներին, սակայն չի նշվել, թե ինչ անհամապատասխանություն պետք է շտկել և ինչպես:

Արդյունքում նման ոչ իրավաչափ գործողությունները հանգեցրել են ոչ միայն «ԳԼՈԲԱԼ-ՇԻՆ» ՍՊԸ-ի հայտը մերժելուն, այլ նաև տասնամյակների աշխատանքային փորձ ունեցող ընկերությանը կանգնեցրել են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառվելու վտանգի առջև:

2. Ինչպես ընդհանուր առմամբ սույն գործի հանգամանքներից պարզ է դառնում, «ԳԼՈԲԱԼ- ՇԻՆ» ՍՊԸ-ն պարտավորվել է ներկայացնել իր գնային առաջարկի չափով որակավորման ապահհովում, մինչդեռ հրավերով պահանջվել է ներկայացնել միայն գնային առաջարկի միայն 15 տոկոսի չափով որակավորման ապահովում:

Փաստորեն, «ԳԼՈԲԱԼ-ՇԻՆ» ՍՊԸ-ն պարտավորվել է որակավորման ապահովումը ներկայացնել իր գնային առաջակի ոչ թե 15, այլ 100 տոկոսի չափով:

Գտնում ենք, որ նման պարագայում հայտը ենթակա չէր մերժման այն հիմնավորմամբ, որ ՍՊԸ-ն իր ռիսկով և իր սեփական համաձայնությամբ է պարտավորվել ներկայացնել ավել գումարի որակավորման ապահովում, և տվյալ դեպքում պետությունը ձեռք է բերում միայն շահեկան դիրք:

Ավելին, օրինակ Կարգի 32-րդ կետի 9-րդ ենթակետի համաձայն՝ եթե մասնակիցը հայտի ապահովումը ներկայացրել է սույն ենթակետով սահմանված չափից ավելի, ապա հայտը համարվում է հրավերի պահանջներին բավարարող և ենթակա չէ մերժման:

Գտնում ենք, որ Կարգի 32-րդ կետի 9-րդ ենթակետի տրամաբանությունը պետք է տարածվեր նաև որակավորման ապահովման վրա: Չէ որ, եթե պայմանագրի կնքման փուլում ՍՊԸ-ն ներկայացներ որակավորման ապահովում իր պայմանագրի գնի 100 տոկոսի, այլ ոչ թե 10 տոկոսի չափով, վերոհիշյալը չէր հանդիսանալու պայմանագիր

կնքելու իրավունքից զրկելու հիմք: Նույն տրամաբանությամբ 100 տոկոսին հավասար որակավորման ապահովում ներկայացնելու պարտականությունը նույնպես չպետք է հիմք հանդիսանար մասնակցի հայտը մերժելու համար:

Գտնում ենք, որ վերոհիշյալ ձևական դրսևորումը չպետք է հիմք հանդիսանա «ԳԼՈԲԱԼ-ՇԻՆ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկելու համար:

Ելնելով վերոնշված փաստերից ու փաստական հանգամանքներից, խնդրում ենք «ԳԼՈԲԱԼ-ՇԻՆ» ՍՊԸ-ին չվերագրել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված պայմանագրով ստանձնած որևէ պարտավորության խախտում, և վերջինիս չներառել «Գնումների մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում»»:

«Գլոբալ-Շին» ՍՊԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2021/131 ընթացակարգի շրջանակներում 27.05.2021թ. ժամը 09:25-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

«Գլոբալ-Շին» ՍՊԸ-ն Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին 01.06.2021թ. ուղղված միջնորդությամբ խնդրել է 04.06.2021թ. ժամը 09:25-ին որոշման հրապարակման նպատակով հրավիրված նիստի օրը անցկացնել քննարկում, որպեսզի Ընկերությունը հնարավորություն ունենա բանավոր ներկայացնելու իր դիրքորոշումը:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի կողմից սույն գործով 04.06.2021թ. ժամը 09:25-ին հրավիրված նիստի ընթացքում բավարարվել է վերջինիս միջնորդությունը և մինչ որոշման հրապարակումը տրամադրվել է հնարավորություն ներկայացնելու Ընկերության կողմից 01.06.2021թ. գրավոր ներկայացված դիրքորոշումը:

3. <u>ՀՀ պաշտպանության նախարարության կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

ՀՀ պաշտպանության նախարարությունը ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 17.05.2021թ. թիվ ՊՆ/02/2627-2021 գրությամբ հայտնել է հետևյալը.

««ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-10/16» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի միջոցով գնում կատարելու ընթացակարգի հայտերի բացման և գնահատման նիստում

«ԳԼՈԲԱԼ-ՇԻՆ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում ներառված փատաթղթերի ուսումնասիրության արդյունքում գնահատող հանձնաժողովի կողմից արձանագրվել են անհամապատասխանություններ հրավերի պահանջների նկատմամբ և ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետի հիման վրա, «ԳԼՈԲԱԼ-ՇԻՆ» ՍՊԸ-ն սահմանված կարգով ծանուցվել է արձանագրված անհամապատասխանությունների շտկման վերաբերյալ:

«ԳԼՈԲԱԼ-ՇԻՆ» ՍՊԸ-ի կողմից Կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում ոչ մի փաստաթուղթ չի ներկայացվել, ուստի գնահատող հանձնաժողովը հիմք ընդունելով Կարգի 42-րդ կետը որոշել է «ԳԼՈԲԱԼ-ՇԻՆ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը գնահատել անբավարար և մերժել:

Կից ներկայացվում են «ԳԼՈԲԱԼ-ՇԻՆ» ՍՊԸ-ին գնման գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու գործընթաց նախաձեռնելու նպատակով պահանջվող փաստաթղթերը»:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2021/131 ընթացակարգի շրջանակներում 27.05.2021թ. ժամը 09:25-ին և 04.06.2021թ. ժամը 09:25-ին հրավիրված նիստերի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. <u>ՍՑ-ՆԳ-2021/131 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

ՍՑ-ՆԳ-2021/131 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. ՀՀ պաշտպանության նախարարության կողմից կազմակերպվել է «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-10/16» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (հետայսու նաև՝ Ընթացակարգ), որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Գլոբա-Շին» ՍՊԸ-ն:

2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 07.05.2021թ. նիստի թիվ 4 արձանագրությամբ արձանագրել է, հետևյալը. «Ընթացակարգի հրավերի 10.2 կետի համաձայն՝ որակավորման ապահովման չափը հավասար է ընտրված մասնակցի գնային առաջարկի 15 տոկոսին, իսկ հրավերի՝ գնման հարցման ընթացակարգին

մասնակցելու դիմում-հայտարարության (հավելված N 1.1) կետի համաձայն, Մասնակիցը «....պարտավորվում է ընտրված մասնակից ճանաչվելու դեպքում, հրավերով սահմանված կարգով և ժամկետում, ներկայացնել որակավորման ապահովում»:

Սակայն «Գլոբալ-Շին» ՍՊԸ-ի կողմից ներկայացված դիմում-հայտարարության (Հավելված 1.1) 1) կետի համաձայն, Մասնակիցը «....պարտավորվում է ընտրված մասնակից ճանաչվելու դեպքում, հրավերով սահմանված կարգով և ժամկետում, ներկայացնել գնային առաջարկի չափով որակավորման ապահովում «ինչը չի համապատասխանում հրավերի պահանջներին:

07.05.2021թ.-ին տեղի ունեցած նիստին՝ հիմք ընդունելով Կարգի 41-րդ կետը՝ հանձնաժողովը որոշեց մեկ աշխատանքային օրով կասեցնել նիստը և գնումների համակարգողը նույն օրը ծանուցեց վերոնշյալ մասնակիցներին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը /10.05.2021թ./ շտկել վերը նշված անհամապատասխանությունը»:

3. Նույն արձանագրության համաձայն՝ գնահատող հանձնաժողովը արձանագրել է, որ 13.05.2021թ. տեղի ունեցած նիստին՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ «Գլոբալ-Շին» ՍՊԸ-ն Կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում չի շտկել հանձնաժողովի կողմից արձանագրված անհամապատասխանությունը, ուստի հիմք ընդունելով Կարգի 42-րդ կետի պահանջները, Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը որոշել է Ընկերության հայտը գնահատել անբավարար և մերժել:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 24.05.2021թ. թիվ 26/26-1/8196-2021 գրությունը, ՀՀ պաշտպանության նախարարության 17.05.2021թ. թիվ ՊՆ/02/2627-2021 գրությունը՝ կից փաստաթղթերով, «Գլոբա-Շին» ՍՊԸ-ի դիրքորոշումը և գործով առկա նյութերը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի,

գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե ՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ. հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (հետայսու նաև՝ Կարգ) 32-րդ կետի 1-ին ենթակետի գ) պարբերության համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ մասնակիցը հայտով ներկայացնում է իր կողմից հաստատված հավաստում՝ ընտրված մասնակից ճանաչվելու դեպքում, օրենքի 35-րդ հոդվածով սահմանված ժամկետում, որակավորման ապահովում ներկայացնելու պարտավորության մասին.....: Եթե գնման հայտով տվյալ ընթացակարգի շրջանակում գնվելիք ապրանքի, աշխատանքի կամ ծառայության գինը չի գերազանցում գնումների բազային միավորի յոթանասունապատիկը, որակավորման ապահովման չափը հավասար է ընտրված մասնակցի գնային առաջարկի տասնհինգ, իսկ գերազանցելու դեպքում՝ երեսուն տոկոսին:

Նույն կետի 19-րդ ենթակետի համաձայն՝ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու մասին հավաստումը որակվում է որպես իրականությանը չհամապատասխանող, կամ մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը կամ ընտրված մասնակիցը չի ներկայացնում որակավորման ապահովումը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում:

Կարգի 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ ներառյալ այն դեպքերը, երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը: Եթե անհամապատասխանությունն արձանագրվել է ՀՀ պետական եկամուտների կոմիտեից ստացված տեղեկատվության հիման վրա, ապա մասնակցին ուղարկվող ծանուցմանը կցվում է նաև կոմիտեից ստացված տեղեկատվության բնօրինակից սկանավորված տարբերակը: Մասնակցին ուղարկվող ծանուցման մեջ մանրամասն նկարագրվում են հայտնաբերված անհամապատասխանությունները:

Կարգի 42-րդ կետի համաձայն՝ եթե սույն կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է, ներառյալ եթե մասնակիցը սույն կարգի 32-րդ կետի 1-ին մասի «ե» պարբերությամբ սահմանված ժամկետում չի ներկայացնում հայտի ապահովման բնօրինակը, իսկ ընտրված մասնակից է ճանաչվում հաջորդող տեղ զբաղեցրած մասնակիցը:

Ընթացակարգի հրավերի ՄԱՍ 1-ի 10-րդ կետի 10.2 ենթակետով սահմանվել է, որ որակավորման ապահովման չափը հավասար է ընտրված մասնակցի գնային առաջարկի 15 տոկոսին:

Այսպիսով՝ ՀՀ պաշտպանության նախարարության կողմից կազմակերպվել է «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-10/16» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Գլոբա-Շին» ՍՊԸ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 07.05.2021թ. նիստի թիվ 4 արձանագրությամբ արձանագրել է, հետևյալը. «Ընթացակարգի հրավերի 10.2 կետի համաձայն՝ որակավորման ապահովման չափը հավասար է ընտրված մասնակցի գնային առաջարկի 15 տոկոսին, իսկ հրավերի՝ գնաման հարցման ընթացակարգին մասնակցելու դիմում-հայտարարության (հավելված N 1.1) կետի համաձայն, Մասնակիցը «....պարտավորվում է ընտրված մասնակից ճանաչվելու դեպքում, հրավերով սահմանված կարգով և ժամկետում, ներկայացնել որակավորման ապահովում»:

Սակայն «Գլոբալ-Շին» ՍՊԸ-ի կողմից ներկայացված դիմում-հայտարարության (Հավելված 1.1) 1) կետի համաձայն, Մասնակիցը «....պարտավորվում է ընտրված մասնակից ճանաչվելու դեպքում, հրավերով սահմանված կարգով և ժամկետում, ներկայացնել գնային առաջարկի չափով որակավորման ապահովում «ինչը չի համապատասխանում հրավերի պահանջներին:

07.05.2021թ.-ին տեղի ունեցած նիստին՝ հիմք ընդունելով Կարգի 41-րդ կետը՝ հանձնաժողովը որոշել է մեկ աշխատանքային օրով կասեցնել նիստը և գնումների համակարգողը նույն օրը ծանուցեց վերոնշյալ մասնակիցներին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը /10.05.2021թ./ շտկել վերը նշված անհամապատասխանությունը:

Նույն արձանագրության համաձայն՝ գնահատող հանձնաժողովը արձանագրել է, որ 13.05.2021թ. տեղի ունեցած նիստին՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ «Գլոբալ-Շին» ՍՊԸ-ն Կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում չի շտկել հանձնաժողովի կողմից արձանագրված անհամապատասխանությունը, ուստի հիմք ընդունելով Կարգի 42-րդ կետի պահանջները, Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը որոշել է Ընկերության հայտը գնահատել անբավարար և մերժել:

Այսպիսով՝ արձանագրում եմ, որ Ընթացակարգի հրավերի ՄԱՍ 1-ի 10-րդ կետի 10.2 ենթակետով սահմանվել է, որ ***որակավորման ապահովման չափը հավասար է ընտրված մասնակցի գնային առաջարկի 15 տոկոսին***:

Ընթացակարգի հրավերի հավելված N 1-ով՝ գնանշման հարցման ընթացակարգին մասնակցելու դիմում-հայտարարությունը սահմանվել է հետևյալ տեսքով՝

Հավելված N 1
ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-10/16 ծածկագրով
գնանշման հարցման ընթացակարգի հրավերի

ԴԻՄՈՒՄՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ*

գնանշման հարցման ընթացակարգին մասնակցելու

_____ հայտնում է, որ ցանկություն ունի մասնակցել
մասնակցի անվանումը

ՀՀ պաշտպանության նախարարության կողմից **ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-10/16** ծածկագրով հայտարարված գնանշման հարցման ընթացակարգի _____ չափաբաժնի (չափաբաժինների) համարը չափաբաժնին (չափաբաժիններին) և հրավերի պահանջներին համապատասխան ներկայացնում է հայտ:

_____-ն հայտնում և հավաստում է, որ հանդիսանում է
մասնակցի անվանումը

_____ռեզիդենտ:
երկրի անվանումը

_____-ի՝
մասնակցի անվանումը

- հարկ վճարողի հաշվառման համարն է՝ _____
  հարկի վճարողի հաշվառման համարը
- էլեկտրոնային փոստի հասցեն է՝ _____
  էլեկտրոնային փոստի հասցեն
- գործունեության հասցեն է՝ _____
  գործունեության հասցեն
- հեռախոսահամարն է՝ _____
  հեռախոսի համարը

Սույնով _____-ն հայտարարում և հավաստում է, որ՝
մասնակցի անվանում

1) ***բավարարում է ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-10/16 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին և պարտավորվում ընտրված մասնակից ճանաչվելու դեպքում, հրավերով սահմանված կարգով և ժամկետում, ներկայացնել որակավորման ապահովում.*** [1]

2) **ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-10/16** ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին մասնակցելու շրջանակում՝

---

[1] Եթե կիրառվում է սույն հրավերի 1-ին մասի 2. 4 կետի 2-րդ նախադասությամբ նախատեսված կարգավորումը, ապա << պարտավորվում ընտրված մասնակից ճանաչվելու դեպքում, հրավերով սահմանված կարգով և ժամկետում, ներկայացնել որակավորման ապահովում.>> բառերը փոխարինվում են <<վերջինս կամ սույն ընթացակարգի շրջանակում վերջինիս կողմից՝ որպես պաշտոնական ներկայացուցիչ, մատակարարվող ապրանքներն արտադրող կազմակերությունը, հայտերը բացելու օրվա դրությամբ ունի միջազգային հեղինակավոր կազմակերպությունների (Fitch, Moodys, Standard & Poor's) կողմից շնորհված վարկունակության վարկանիշ առնվազն Հայաստանի Հանրապետությանը շնորհված սուվերեն վարկանիշի չափով:>> բառերով: Ընդ որում նշվում է նաև վարկանիշի չափը և վարկունակության վարկանիշ ունեցող կազմակերպության անվանումը:

• թույլ չի տվել և (կամ) թույլ չի տալու գերիշխող դիրքի չարաշահում և հակամրցակցային համաձայնություն,

• բացակայում է հրավերով սահմանված՝ _____-ին
մասնակցի անվանումը

փոխկապակցված անձանց և (կամ) _____
-ի
մասնակցի անվանումը

կողմից հիմնադրված կամ ավելի քան հիսուն տոկոս _____
-ին
մասնակցի անվանումը

պատկանող բաժնեմաս (փայաբաժին) ունեցող կազմակերպությունների միաժամանակյա մասնակցության դեպք:

• ստորև ներկայացնում է հայտը ներկայացնելու օրվա դրությամբ այն ֆիզիկական անձի (անձանց) տվյալները, ով ուղղակի կամ անուղղակի ունի մասնակցի կանոնադրական կապիտալում քվեարկող բաժնետոմսերի (բաժնեմասերի, փայերի) ավել քան տաս տոկոսը, ներառյալ ըստ ներկայացնողի բաժնետոմսերը, կամ այն անձի (անձանց) տվյալները, ով իրավունք ունի նշանակելու կամ ազատելու մասնակցի գործադիր մարմնի անդամներին, կամ ստանում է մասնակցի կողմից իրականացվող ձեռնարկատիրական կամ այլ գործունեության արդյունքում ստացված շահույթի տասնհինգ տոկոսից ավելին (իրական շահառուներ)** և հավաստում, որ իրական շահառուների մասին ներկայացված տեղեկատվությունը իրական է և չի պարունակում ոչ հավատի տեղեկություններ:

Անունը Ազգանունը Հայրանունը	ՀՀ քաղաքացիների համար՝ նույնականացման քարտի կամ անձնագրի կամ ՀՀ օրենսդրությամբ նախատեսված անձը հաստատող փաստաթղթի տեսակը և համարը	Օտարերկրյա քաղաքացիների համար համապատասխան երկրի օրենսդրությամբ նախատեսված անձը հաստատող փաստաթղթի տեսակը և համարը

Կից ներկայացվում է _____ կողմից առաջարկվող
մասնակցի անվանումը

ապրանքի ամբողջական նկարագիրը՝ համաձայն հավելված 1.1-ի:

_____ _____
Մասնակցի անվանումը (ղեկավարի պաշտոնը, անուն ազգանունը) ստորագրությունը)

Միևնույն ժամանակ արձանագրում եմ, որ ***«Գլոբալ-Շին» ՍՊԸ-ն*** հայտով ներկայացված Հավելված N 1-ի՝ գնանշման հարցմանը մասնակցելու դիմում-հայտարարության 1-ին կետով ***հայտնել և հավաստել է, որ*** բավարարում է ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-10/16 ծածկագրով գնանշման հարցման հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին և ***պարտավորվում*** ընտրված մասնակից ճանաչվելու դեպքում, հրավերով սահմանված կարգով և ժամկետում, ***ներկայացնել գնային առաջարկի չափով որակավորման ապահովում***:

Այսպիսով՝ ամփոփելով վերոգրյալը, արձանագրում եմ, որ Ընթացակարգի հրավերով սահմանվել է, որ որակավորման ապահովման չափը հավասար է ընտրված մասնակցի գնային առաջարկի 15 տոկոսին, իսկ Ընկերությունը Հավելված N 1-ով՝ գնանշման հարցմանը մասնակցելու դիմում-հայտարարությամբ պարտավորվել է ներկայացնել որակավորման ապահովում իր գնային առաջարկի չափով, այսինքն՝ Ընկերությունը որակավորման ապահովումը պարտավորվել է ներկայացնել Ընթացակարգի հրավերով սահմանված չափից ավելի, որպիսի պայմաններում գտնում եմ, որ Ընկերության հայտն ըստ էության համարվում է Ընթացակարգի հրավերի պահանջներին բավարարող:

Վերոգրյալի հաշվառմամբ, գտնում եմ, որ «Գլոբալ-Շին» ՍՊԸ-ն «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-10/16» ծածկագրով ընթացակարգի շրջանակներում թույլ չի տվել Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված պարտավորության խախտում, ուստի առկա չեն Ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքեր:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 24.05.2021թ. թիվ 26/26-1/8196-2021 գրությամբ «Գլոբալ-Շին» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**